

Հանգուցեալը ծնած էր Սեօյիւտ (Պիլեծիք, 1902ի Մարտ 8ին: Սուրբ աւագանի անունով՝ Վրթանէս, շուտով կը մտնէր Իզմիտի Միթիթարեան նորաշէն Ընծայարանը, որուն առաջին աշակերտը կ'ըլլար եւ միակը՝ առանձնաշնորհաշնորհ խումբէն, որ կը յարատեւէր կոչումին մէջ: Վենետիկ կը հասնէր 1913ի Յունիս 27ին: Երկրորդական ուսումնէն աւարտելով Ս. Ղազարու մայրավանքին մէջ, 1918ին կ'անցնէր Հոռմ, կատարելու իր նորընծայութիւնը. հոն՝ 1922ին, մշտնջենաւոր ուխտերով ալ կ'անդամակցէր Միաբանութեան: Յաջորդաբար, իմաստասիրական եւ աստուածաբանական ուսումններն աւարտելով Գրիգորեան համալսարանին մէջ, 1925ի Դեկտ. 8ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուէր, երկու աւագ դասակիցներու հետ (Գրգծ. Կարապետ Եսս. Ամատունի եւ Հ. Սամուէլ Վրդ. Արամեան): 1936ին կը տտանար վարդապետական գաւազան, Միաբանութեանս Ընդհ. Արքահայր Գրգ. Սրապիոն Ուլուհոճեանի ձեռքէն:

Մեծաւորները սկիզբէն զնահատելով երիտասարդ Հ. Պաշտուրի նուիրումն ու քարեշնորհ ձիրքերը, յատկապէս՝ դաստիարակի ու կազմակերպող մատակարարի, գրեթէ միշտ աշակերտի պատասխանատու պաշտօններ յանձնած են իր ուսերուն, երկար տարիներ:

1926ին, Հ. Պաշտի (աշակէս կը կոչէինք զինք՝ վանքին մէջ) օգնական է Ս. Ղազարու Տպարանապետ Հօր, 1927-30 օգնական՝ վանքի Ընծայացուններու դաստիարակ Վերակացու Հայրերուն, նախ՝ փոքրիկ, ապա մեծագոյն դասի աշակերտներուն վրայ: 1930-31 ուսուցիչ է Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին մէջ, 1931-33 նաեւ Գործակալ ու Մատակարար՝ նոյն վարժարանին: 1933-34 կ'անցնի Պուտափեշտ, այնտեղի հայ գաղութին որպէս հոգեւոր հովիւ ու մատակարար վանքի կալուածներուն: 1934-39 ուսուցիչ է եւ Մատակարար Սեւրի Մուրատեան Վարժարանին մէջ, պատմաբան ու բաղմամբստակ Հ. Սահակ Վրդ. Տէր-Մովսէսեանի տեսչութեան օրով:

1939էն ետք, պատերազմի տխուր օրերուն, Հ. Պաշտուր Վրդ. կու գայ Ս. Ղազար ու կը ստանձնէ վանքին գործակալութիւնը, ապա տպարանապետութիւնը՝ 1940-46: Պատերազմի մտահոգիչ շրջանին՝ ձեռնահասօրէն կը ծաղկեցնէ Ս. Ղազարի տպարանը, հրատարակելով «Սեւան» Ընթերցարաններու եւ «Գրական Յուլներ»ու ընտիր շարքերը, աշակցութեամբ վանաբնակ՝ բայց այդ ժամանակամիջոցին գիւղ ապաստանած գրադէտ Հայրերու ժիր ջանքերուն: Պատերազմէն ետք՝ Միաբանութիւնը դարձեալ զինք կ'առաքէ Սեւրը, մատակարարի պաշտօնով. այդ շրջանին է որ շատ մեծ զոհողութիւններով կը յաջողի վերաշինել վարժարանի շէնքը, արդիացնել ննջարաններու բաժինները, թատերասրահ եւ այլ կարեւոր մասեր. այս պաշտօնին գրուի կը մնայ 1947-52: Այդ թուականին, Միաբանութեան Ընդհ. Ժողովին մէջ կ'ընտրուի Ընդհ. Առաջիկայ, այսինքն՝ վանքի կեդրոն-

նական վարչութեան խորհուրդի անդամ, ու կը մնայ այնուհետեւ Վենետիկ, Ս. Ղազար. միաժամանակ դարձեալ իրեն կը յանձնուի տպարանապետի պաշտօնը (1952-54), եւ ամբողջ վեցամեակ մը՝ մեծ նուիրումով կը վարէ վանքի նորընծայարանին վերակացութեան եւ դաստիարակի պատասխանատու պաշտօնը (1952-58):

1958 թուականի Ընդհ. Ժողովքէն ետք, Հ. Պաշտուր Վրդ. հլու վիճակով նման կը փոխադրուի ուրիշ ճակատի վրայ, Պուէնոս Այրէս, հոն պաշտօնավարելու համար՝ նախ իբրեւ Մատակարար, ապա նաեւ իբրեւ Տեսուչ ու Մեծաւոր՝ 1946էն ի վեր: Ամէնուս ծանօթ է թէ ինչ անձնուիրութեամբ փարեցաւ իր նոր պաշտօնին, ինչպէս ծաղկեցուց ու շէնցուց վարժարանը, ընդարձակեց զայն նոր բաժիններով, անշուշտ վայելելով միշտ համակրանքն ու քաջալերանքը, ինչպէս նաեւ սիրալոյսով օժանդակութիւնը բարերար ազգայիններու, Մուրատ-Ռափայէլեանի նախկին աշակերտներու, որոնք Պուէնոս Այրէս էին հաստատուած՝ շատ տարիներէ ի վեր ու մտահոգ էին գաղութին մշակութային վերելքով: Ասոնց շարքին՝ պարտական ենք երախտագիտութեամբ յիշատակել անունները Տէր եւ Տիկին Յովհ. Տիարպեղիբեաններու, ինչպէս նաեւ Շիրինեան, Էօրնէքեան, Զըննողեան եւ այլ պատուական բաղմամբիւ անձնաւորութիւններու, որոնք սկիզբէն ի վեր թեւ ու թիկունք հանդիսացան՝ նախ Հ. Ստեփան Վրդ. Ֆերահեանին, որ այդ վարժարանին հիմերը դրաւ, 1950ական թուականներէն առկին, և ապա յաջորդաբար՝ Հ. Պաշտուր Վրդ. ին, ու տակաւին մինչեւ վերջերս կը շարունակեն անձնուիրաբար սատարել Միթիթարեան Հայրերու կատարած ազգանուէր աշխատանքին:

Հակառակ մատակարարական ծանր պատասխանատուութեան եւ աշխատանքին, Հ. Պաշտուր Վրդ. միշտ ջանացած է հմուտ ու վարժ ուսուցիչի պաշտօնով ալ զբաղել, աշակերտներուն ջամբելով հայեցի դաստիարակութիւն. կը դասաւանդէր կրօնք, ազգային պատմութիւն, մատենագրութիւն եւ հայերէն լեզու*: Միտ էր կարգապահութեան մարդին մէջ ու նոյնիսկ քիչ մը չոր. լայց ունէր ազնիւ սիրտ, քաջալերանքով օժուել խօսք. էր սիրելի մանուածապատ ասութիւններով շարադրուած դրուատիքներ. խօսքին յատկը, կար-

*) Երիտասարդութեան օրերուն, «Բագմալիպ»ի մէջ, Հ. Պաշտուր ստորագրած է թանի մը յօդուածներ ալ. «Հայկական ծագմամբ Նաբոլեոնական Նաւասարդ մը՝ Հռովմայ մէջ» (1921, Թ. 8, էջ 269-270, Թարգմանութիւն իտալերէնէ. հեղինակն է՝ Decio Cortesi, տե՛ս «Corriere d'Italia», 1920, Օգոստ. 15). «Յիշում չիսկեմ Կարգիմ դերը՝ գիտութեան եւ արուեստի մէջ» (1926, Թ. 12, էջ 375-378). «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կառավար. Եկեղեցւոյ մասին» (1930, Թ. 5, էջ 224-232). «Georges Goyau» (1939, Թ. 11-12, էջ 318-320): Հ. Պաշտուրի մասին տե՛ս նաեւ «Միթիթարեան Ընտանիք» 1953, Թ. 2, էջ 22-25. «Հայ Ընտանիք» 1976, Թ. 5-6, էջ 34-35:

ձը, շխտակը, իր բառերով «աշխարհաբարը» կը փնտռէր ու կը նախասիրէր. բաւ կը կազմակերպէր դպրոցական կարգ-կանոնը. իսկ ելեւմուտքի հաշիւներուն մէջ իր գլխաւոր ու օրինակելի յատկութիւնն էր բծախնդիր յատկութիւնը:

Հ. Խաչատուր Վրդ. ի շինարար բազմաթիւ արժանիքներէն մասունք կը մնայ հիմա, Ս. Ղազարի վանքին մէջ, նորընծայարանի փոքրիկ մատուռը, իր հայաձեւ խորանով ու տապանակով, պատրաստուած՝ Զուարթնոցի եւ այլ հայկական եկեղեցիներու խորաքանդակներուն նմանողութեամբ, որոնց գծադրութիւնները վեհանձնօրէն կատարած է Ճրտ. Յարութիւն Գաղանձեան: Վանքին վերջին աղէտալի հրդեհէն ետք, երբ երկար ժամանակ զրկուած մնացինք մեր եկեղեցիէն, հոն՝ այդ փոքրիկ ու հոգեւին տաքուկ մատրան մէջ կատարեցինք մեր ամէնօրեայ ժամերգութիւնները, միշտ օրհնելով յիշատակը մեր շատ սիրելի, ժիր ու դործունեայ Վարդապետին, որ յաջողած էր հնամենի եւ աղօթքով ու խունկով մաշած մրոտած մատուռը վերածել դեղեցիկ ու սրտադրաւ աղօթատեղիի մը**:

Հողը կակուղ ըլլայ վրադ, սիրելի՛ Հ. Խաչատուր, հեռաւոր Պուլէնոս Այրէսի քու պանդուխտ գերեզմանիդ վրայ: Ո՛րքան պիտի ուզէիր դուն ալ հանգչիլ խաղաղիկ Սուրբ Ղազարի գերեզմանատունը, քու դաստիարակ ու սրտակից Հայրերուդ կողքին, մեծ Ալիշանի շունչին տակ, մեր Երանաշնորհ Մխիթար Աբբա՛հօր մօտիկ: Բայց քու շիրիմդ թող ըլլայ ալի մը լոյս, հայրենիքէն ու Ս. Ղազարէն ծաթող՝ հեռաւոր Պուլէնոս Այրէսի գաղութին վրայ, որպէս արշալոյս հրավառ, յաւէտ կրօնքի ու ազգի սիրով արծարծելու բոլոր Հայերու սրտերը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

***) Վանքին նորընծայարանի մատրան վերաշինութեան եւ նաւակատիքի հանդէսին մասին տե՛ս «Մխիթարեան Ընտանիք» 1954, Թ. 3, էջ 48:

Հ. ԱՆԴՐԷԱՍ ՎՐԴ. ՖՈԿՈԼԵԱՆ

(1915 – 1976)

Մխիթարեան Միաբանութիւնը մեծ կորուստ մը եւս արձանագրեց 1976 տարուան ընթացքին, վաղաժամ մեկնումով իր սիրելի ու վաստակաւոր անդամներէն մէկուն՝ Հ. Անդրէաս Վրդ. Ֆոկոլեանի, իր կեանքի վաթսուներորդ գարունը հազիւ թեւակոխած:

Զուարթ նուիրումի ու անխոնջ աշխատանքի տիպարն էր մեր ախրելի ու պարթեւահասակ Հ. Անդրէասը, որ Մայիսեան պայծառ օր մը, դեղեցիկ վարդերու եւ բուրումնաւէտ հիւրկներու թափօրով կ'երթար հանգչիլ Մխիթարեան Հայրերու գերեզմաննոցը, հոգինբարու այդ հանդերուանին մէջ դառնալու համար ճրագ մը լուսաշող, նոճի մը շնորհազարդ ու աղօթիկեր:

Ո՛րքան կը սիրէր Հ. Անդրէաս ծաղիկներն ու բոյսերը, որոնք այդ օրը դոյնդոյն բացուեր էին իր ճամբուն վրայ, կարծէք վերջին համբոյրով ողջունելու իրենց սիրահար Վարդապետը. քայց ինք անտարբեր կը մնար այլեւս անոնց առթած գեղին ու հրապոյրին. իր իսկ գուրդուրոտ ձեռքերով հաւաքած ու ճարտարօրէն դասաւորած անհամար թիթեռնիկներու եւ միջատները ճով հաւաքածոները որբ պիտի մնային այլեւս:

Իր սիրասուն աշակերտները թողած, ո՞ւր կ'երթար Հ. Անդրէաս. չէ՞ որ ամէն Մայիսի՝ երբ դասարան մտնէր, անպայման ձեռքին մէջ կ'ունենար սիրուն փունջ մը վանքի ծաղիկներէն, ամէն տեսակէ ու սեռէ, եւ ծայր կու տար իր հետաքրքրական դասախօսութիւններուն, դործնական քացատրութիւններով գրաւիչ, հայադրոյժ անծանօթ բառերու տոպրակ մըն ալ պարպելով գրասեղանին վրայ, ծաղիկներուն առնթեր:

Անողորմ հիւանդութիւն մը տապալած էր առողջ կաղնին, մեր կենսուրախ ու կորովի Հ. Անդրէասը, որ կեանքին մէջ հիւանդ իսկ չէր եղած. ու մենք չէինք անգամ հաւատար անոր վաղահաս մահուն:

3 Մայիս 1976. կէսօրէ ետք՝ ժամը 1,50. հեռաձայնը կը դուժէ. դադրած է բաբախել Հ. Անդրէասի սիրտը: Նախորդ օրն այդ ժա-